ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գագիկ Հարությունյան

Համաձայն ժամանակակից պատկերացումների, ազգային անվտանգություն (ԱԱ) հասկացությունը ներկայացնում է երեք բաղադրամասերի՝ ռազմաքաղաքական անվտանգության, սոցիալ-տնտեսական անվտանգության և տեղեկատվական անվտանգության ամբողջություն: Այդ բաղադրամասերից որևէ մեկի անտեսումը կամ թերագնահատումը թերի է դարձնում ցանկացած ԱԱ հայեցակարգ: Դրան զուգահեռ, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղեկատվական ոլորտները ներկայումս ինտեգրվում են, այսինքն՝ ԱԱ բաղադրամասերի միջև սահմանները հաճախ խիստ պայմանական են:

Իրենց հերթին, ԱԱ վերոհիշյալ ոլորտներն ընդգրկուն են և հանդիսանում են այլ բաղադրամասերի միասնություն: Մասնավորապես՝ տեղեկատվական անվտանգությունը (ՏԱ) ծավալուն և բովանդակալից հասկացություն է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային ոլորտներին: Կարելի է փաստել, որ ՏԱ-ն փոքր-ինչ ավելի անմիջականորեն, քան ԱԱ մնացյալ բաղադրամասերը, կապված է մարդկային, հանրային և ազգային գործոնների հետ:

Այս վերջինի առիթով հարկ է նշել, որ Հայաստանի պետականությունը ներկայացնող ՀՀ և ԼՂՀ[1] (ինչպես և մեծաթիվ սփյուռք ունեցող այլ երկրների) ԱԱ համակարգերը պետք է ներառեն ոչ միայն ՀՀ բնակչության, այլև սփյուռքահայության հարատևման հետ կապված խնդիրների համախումբը: Այս համատեքստում ՀՀ ՏԱ ցանկացած հայեցակարգային բնույթի փաստաթղթում պետք է տեղ գտնի նաև Սփյուռքի հետ կապված հիմնախնդիրների գոնե մի մասը:

Ինֆոգեն սպառնալիքներ

ՏԱ գործառույթներն էապես կապված են, այսպես կոչված, *ինֆոգեն (տեղեկատվածին)* գործընթացների հետ[2], որոնք պարունակում են և՛ դրական-կոնստրուկտիվ, և՛ բացասական-դեստրուկտիվ՝ սպառնալիք և վտանգ պարունակող, բաղադրիչներ:

Ինֆոգեն սպառնալիքները կարելի է դասակարգել երկու հիմնական տիպի.

1. տեխնիկական բնույթի ինֆոգեն սպառնալիքներ, որոնք ուղղված են անհատի, հասա-

[1] Ըստ մեզ, ՀՀ և ԼՂՀ ԱԱ համակարգերը պետք է լինեն եթե ոչ նմանատիպ կամ ընդհանուր, ապա գոնե առնվազն համատեղելի: Հետագա շարադրանքում ՀՀ, ԼՂՀ հապավումների և հայություն հասկացության փոխարեն կօգտագործվի միայն ՀՀ հապավումը:

[2] Гагик Тер–Арутюнянц, Инфогенные вызовы, Голос Армении, 08.12.2001; Гагик Тер–Арутюнянц, «Инфогенные» вызовы, в сб. «Информационные войны», серия «Мир сегодня», #4, с. 5. Ереван, 2002, Գագիկ Հարությունյան, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, էջ 25, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003:

րակության, ազգի և պետության գործունեությունը կազմակերպող և համակարգող տեղեկատվական տեխնիկական համակարգերի դեմ: Այդ սպառնալիքները կարող են իրագործվել այդ համակարգերի տեխնիկական խոցելիության պատճառով,

2. հոգևոր-գաղափարական բնույթի ինֆոգեն սպառնալիքներ, որոնք ուղղված են անհատի, հասարակության, ազգի գիտակցության (ենթագիտակցության), հոգևոր և քաղաքակրթական արժեհամակարգերի դեմ: Այդ սպառնալիքների իրագործումը պայմանավորված է «մարդկային և հանրային» գործոնների ոլորտում թույլ տրված թերացումներով:

Ինֆոգեն սպառնալիքների աղբյուրները կարող են լինել *արտաքին և ներքին*: *Արտաքին ինֆոգեն սպառնալիքների* աղբյուրներ կարող են հանդիսանալ.

- ՀՀ ռազմավարական-մարտավարական մրցակից կամ հակառակորդ հանդիսացող երկրները կամ կազմակերպությունները,
- իրենց շահերը հետապնդող, սակայն ՀՀ ազգային շահերն անտեսող երկրները և կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել նաև ՀՀ քաղաքական և տնտեսական գործընկերները,
- տեղեկատվական դաշտում առկա, բայց ոչ հատուկ ՀՀ դեմ ուղղված քաոտիկ տեղեկատվական հոսքերը, որոնք բացասական ներգործություն են ունենում հանրային գիտակցության վրա:

Ինֆոգեն ներքին սպառնալիքների աղբյուր կարող են հանդիսանալ.

- ՀՀ-ում տեղակայված, սակայն օտարերկրյա ռեսուրսներից սնվող քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները և զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ), որոնց գործողություններն ուղղված են ՀՀ ազգային շահերի դեմ,
- ներքին մասնավոր և պետական ռեսուրսների վրա հիմնված քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները, ընկերությունները, պետական մարմինները և ԶԼՄ-ը, որոնց պատկերացումները ՀՀ ազգային շահերի վերաբերյալ հստակեցված չեն: Որպես հետևանք՝ նման կառույցները կարող են ակամա կամ գաղափարական սխալ կողմնորոշման հետևանքով ինֆոգեն վտանգի աղբյուր հանդիսանալ ՀՀ հանրության համար (նման գործողությունները երբեմն որակվում են որպես «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ»[1]):

Ինչպես տեսնում ենք, ինֆոգեն սպառնալիքների բացահայտումը և որակումը զգալի չափով պայմանավորված են ազգային շահի (ԱՇ) բովանդակային պատկերացումներով: Այսինքն՝ կարելի է փաստել, որ ԱԱ հայեցակարգի ցանկացած մշակում ենթադրում է ԱՇ հասկացության վերաբերյալ զարգացած պատկերացումներ և հստակեցված ձևակերպումներ: Հակառակ պարագայում ինֆոգեն ներքին սպառնալիքների որակավորումը և բացա-

[1] Георгий Почепцов, Информационные войны, «Рефл-бук», «Ваклер», 2001.

հայտումը խիստ վիճահարույց է լինելու։

Դրական ինֆոգեն գործընթացները պայմանավորված են գլոբալ տեղեկատվական-գիտելիքային դաշտի ձևավորմամբ։ Հայտնի է, որ արդի տեղեկատվական դաշտն արտացոլում է ներկայիս աշխարհակարգը ձևավորող առաջատար պետությունների հիերարխիկ կառուցվածքը։ Սակայն այդ դաշտում սակավ նյութական հնարավորություններ ունեցող սուբյեկտները, ձեռք բերելով անհրաժեշտ ինտելեկտուալ ռեսուրսներ և ասիմետրիկ գործելու կարողություններ, կարող են հասնել զգալի արդյունքների։ Նկատենք, որ հաճախ այդ սուբյեկտները կարող են և չլինել պետություններ կամ նվազագույնը ուղղակիորեն չենթարկվել պետությանը։ Ստեղծված այս իրողությունը արտացոլվում է հետևյալ հայեցակարգային հասկացություններում[1].

- ***Կիբեռքաղաքականություն.*** - Համաձայն եզրի հեղինակ Դևիդ Ռոտկոպֆի հետազոտության (1998թ.), տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է նրան, որ քաղաքականության ավանդական սուբյեկտները՝ պետությունները, արդեն կորցրել են գիտելիքներին (տեղեկատվությանը) տիրապետելու իրենց մենատիրությունը։ Օրինակ՝ նախկինում միայն հատուկ կառույցները և դիվանագետները գիտեին, թե ինչ է կատարվում աշխարհի այս կամ այն մասում, մինչդեռ այսօր ՋԼՄ-ից և Ինտերնետից շարքային օգտվողը նույնպես իրազեկ կարող է լինել այդ տեղեկատվությանը։
- ***Նոոքաղաքականություն (գիտելիքների քաղաքականություն).*** - Ջոն Արքիլը և Դևիդ Ռոնֆելդը, 1999թ. հրատարակած իրենց աշխատությունում նույնպես փաստելով պետության դերի նվազման հանգամանքը, գտնում են, որ քաղաքականության նոր սուբյեկտները՝ միջազգային կազմակերպությունները, ՋԼՄ-ն, անդրազգային (տրանսնացիոնալ) տնտեսական ընկերությունները, ահաբեկչական և հանցավոր կառույցները ձեռք են բերել գիտելիքային/տեղեկատվական ռեսուրսներ, ինչը թույլ է տալիս նրանց վարել ինքնուրույն քաղաքականություն գլոբալ տեղեկատվական դաշտում։
- ***Մեդիաքաղաքականություն.*** - Այս եզրը 2001թ. շրջանառության մեջ է դրել Լի Էդվարդսը, որն ապացուցել է, որ Ինտերնետը և հեռուստատեսությունը վերածվել են քաղաքականության կարևորագույն գործոնի։ Դրանք են, որ էական դեր են կատարում արտաքին և ներքին քաղաքականության ձևավորման գործում, այս կամ այն հիմնախնդրի վրա են հրավիրում հանրության և իշխանության ուշադրությունը։

Տեղեկատվական արդի դարաշրջանը մեծապես նպաստում է ցանցային կառույցների ձևավորմանը։ Դրանք խիստ արդյունավետ են կազմակերպչական տեսակետից և որոշ հետազոտողների հիմնավորված կարծիքով՝ ապագա գլոբալ հասարակարգը ներկայացնելու է ցանցային կառույցների մի համախումբ։ Նկատենք, որ նման կառույցները առանձնահատուկ դերակատարում կարող են ունենալ համազգային նախագծեր իրականացնելու պարագայում։ Այս առիթով նկատենք, որ այսօր շրջանառությունում բացակայում են համահայ-

[1] Washington Profile, #47(564), 05.05.2005.

կական դրական հնչողություն ունեցող գաղափարներ: Այսինքն՝ այսօր դեռևս չի ձևավորվել 21-րդ դարի համահայկական գաղափարական դաշտը:

Նկատենք, որ ձևավորվող նոր աշխարհակարգի պայմաններում նման իրադրությունը արտառոց չէ: Համանման իրադրության մեջ հայտնվել են ոչ միայն հայերը, այլև, օրինակ, ռուսները (վերջիններս, մասնավորապես, ունեն սլավոնական ինքնության խնդիրը), վրացիները, եվրոպական մի շարք ազգեր (նույն գերմանացիները հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կողմից ենթարկվել են ինտենսիվ քարոզչական–կազմակերպչական մշակման, որի հետևանքով էապես կորցրել են իրենց նախկին ազգային-գաղափարական կողմնորոշումները և պատկերացումները): Այս ոլորտում կարծես թե որոշակի ճգնաժամային երևույթներ են նկատվում անգամ անգլո-սաքսերի և հրեաների մոտ, որոնք կարծես թե այդ հարցում գտնվում են առավել բարվոք վիճակում:

Տեղեկատվական պատերազմներ

Ինֆոգեն սպառնալիքների հետ անմիջականորեն կապված տեղեկատվական գործողությունները և պատերազմները մշտապես ուղեկցել են մարդկությանը: Սակայն այդ գործառույթների ժամանակակից ձևը, բովանդակությունն ու եզրաբանությունը ձևավորվել են 1991թ. Իրաքյան առաջին պատերազմի ընթացքում: 1995թ. ԱՄՆ Պաշտպանության ազգային ինստիտուտը հրապարակել է Մարտին Լիբիկի «Ինչ է տեղեկատվական պատերազմը» աշխատությունը, 1998թ. ԱՄՆ պաշտպանության նախարարությունը՝ «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրին» փաստաթուղթը: Այդ փաստաթղթերում ձևակերպվել են «տեղեկատվական պատերազմ» հասկացության և նրա բաղադրիչ «տեղեկատվական գործողության» հետևյալ սահմանումները.

Տեղեկատվական գործողությունը ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և պահպանման գործընթացը խաթարելու նպատակով՝ միևնույն ժամանակ պահպանելով սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական համակարգերը:

Տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն է (տեղեկատվական գործողությունների համախմբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել *տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը:*

Վերջին սահմանումներից հետևում է, որ, մասնավորապես, տեղեկատվական պատերազմը տեխնիկական և հոգևոր-գաղափարական բնույթի ինֆոգեն սպառնալիքների գործնական իրագործումն է: Ամերիկյան «Ռենդ» կորպորացիայի մասնագետները մշակել են նոր՝ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմը դիտվում էր որպես կարևոր բաղադրամաս պատե-

բազմի ավանդական միջոցների՝ միջուկայինի, կենսաբանականի և այլնի կողքին, ապա երկրորդ սերնդինը հանդես է գալիս լիովին ինքնուրույն կերպով: Ի թիվս այն խնդիրների, որոնք լուծվում են երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների միջոցով, առանձնացնենք հետևյալները.

1. բարոյազուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,
2. քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա,
3. առճակատումների հրահրման, անվստահության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխոչնչացման դրդում,
4. իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի իջեցում, կառավարման սխալ որոշումների ներշնչում,
5. պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվություն, նրանց հեղինակազրկում, կառավարման մարմինների վարկաբեկում,
6. սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում,
7. պետության միջազգային հեղինակության գցում, այլ երկրների հետ նրա համագործակցության վնասում,
8. քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում:

Ինչպես տեսնում ենք, երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներում ավելի քան կարևորվում են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները: ՀՀ ՏԱ հարթությունում ուշադրության և վերլուծության արժանի են վերոհիշյալ բոլոր կետերը: Նկատենք, որ ժամանակակից տեղեկատվական մեծ ծավալի հոսքերի պայմաններում ներքին դաշտում հայտնվող մի շարք ինֆոգեն սպառնալիքներից, ինչպիսին, օրինակ, «*հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծումն» է*, գրեթե անհնար է պաշտպանվել արգելող գործողությունների միջոցով: Ներկայումս նման բնույթի տեղեկատվական հակամարտությունը որակում են *«մշակութային պատերազմ»:* Այս ոլորտում արդյունավետ կարող են լինել միայն տվյալ երկրի ՏԱ համակարգի ներսում նույն «մշակութային ժառանգության» հանդեպ զարգացած և համընդհանուր պատկերացումները: Հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ 21-րդ դարում նախկինում այս ոլորտին վերաբերող որոշ պատկերացումներ կարիք ունեն վերանայման կամ զարգացման[1]: Կարելի է նաև պնդել, որ վերոհիշյալ ցուցակի շատ կետեր իրենց արտացոլումն են գտել ներկայիս

[1] Գագիկ Տերտերյան, Հոգևոր անվտանգության խնդիրների շուրջ, «Հանրապետական», #6 (26), էջ 1, 2005:

«գունավոր հեղափոխությունների» հետ կապված իրողություններում:

Ներկայումս մշակվում և զուգահեռաբար իրագործվում են երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների սկզբունքները, որոնք հենված են, այսպես կոչված, «էֆեկտների վրա» և հաճախ ներկայացնում են միաժամանակ մի քանի ոլորտներում սիներգետիկ օրինաչափություններին ենթարկվող գործողությունների համախումբ[1]:

Տեղեկատվական պատերազմները՝ որպես աշխարհագաղափարախոսության հիմնական գործիք

Վերոհիշյալ նոր սերունդների տեղեկատվական պատերազմներն այն տեխնոլոգիական բազան են, որոնք պայմանավորում են աշխարհագաղափարախոսական դոկտրինների գերակայությունը ավանդական աշխարհաքաղաքական կամ աշխարհատնտեսական մոտեցումների նկատմամբ[2]: Այսպիսով, ևս մեկ անգամ ընդգծենք, որ տեղեկատվական գործողությունների և տեղեկատվական պատերազմների միջոցով իրագործված ներգործությունը տեխնոլոգիական միջոց (գործիք) է հանդիսանում այն կիրառող սուբյեկտի համար՝ իր ռազմավարական ծրագրերն իրագործելու նպատակով:

Տեղեկատվական գործողությունների միջոցով ռազմավարության իրագործումը, ինչպես նշված է վերը, *ռոքքաղաքականություն* հասկացության բաղադրամաս է հանդիսանում: *Ռոքքաղաքականությունը* լայնորեն օգտագործվում է արդի միջազգային պրակտիկայում՝ աստիճանաբար դուրս մղելով քաղաքականության ավանդական վարման որոշ տարրեր: Համարվում է, որ *ռոքքաղաքականությունը*, կամ ինչպես դա երբեմն որակում են՝ *փափուկ ուժը,* նաև բնութագրում է այս կամ այն տերության *postmodern* ոճի քաղաքականություն վարելու կարողությունը[3]:

Հատկանշական է, որ երկրի ազգային շահերի դեմ ուղղված տեղեկատվական գործողությունների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել այդ գործողությունների հեղինակի ռազմավարության նրբերանգները, ինչն այլ միջոցներով բացահայտելը միշտ չէ, որ հնարավոր է: Միևնույն ժամանակ, ինֆոգեն վտանգների բացահայտումը հնարավոր է միայն տեղեկատվական դաշտի շարունակական մոնիթորինգի և վերլուծության պարագայում. այս խնդրում միայն օպերատիվ-քննչական միջոցառումներն ակնհայտորեն բավարար չեն:

Պետք է նկատի ունենալ, որ ներկայիս ՀՀ ԶԼՄ տնտեսական իրավիճակը հիմնականում այնպիսին է, որ նրանք կարիք ունեն շարունակական նյութական աջակցության: Այսինքն՝ մի շարք լրատվամիջոցներում «ստվերային» ճանապարհով ստանում են անհրաժեշտ միջոցներ և դրա դիմաց ստանձնում պարտավորություններ՝ որոշակի տեսանկյունից լուսաբանելու այս կամ այն երևույթը: Նման հրապարակումները և հաղորդումները ներկայացվում են որպես խոսքի ազատության արտահայտություն: Միևնույն ժամանակ, միշտ

[1] Сергей Гриняев, «Поле битвы-киберпространство», Минск, Харвест 2004; Գագիկ Տերտերյան, Կենսատեղեկատվական պատերազմներ, «Հանրապետական», #3 (12), էջ 15, 2004:
[2] Գագիկ Տեր-Հարությունյան, Աշխարհաքաղաքականությունից դեպի աշխարհագաղափարախոսություն, «Հանրապետական», #3 (23), էջ 28, 2005:
[3] Елена Ананьева, «Реконструкция Запада», Международная жизнь, #3-4, с. 18, 2005.

չէ, որ նյութական աջակցություն ցուցաբերողների տեսակետները (որոնք, չի բացառվում, կարող են լինել և այլ պետությունների շահերի ներկայացուցիչներ), համընկնում են ՀՀ անվտանգության դրույթներին կամ շահերին: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է.

- ստեղծել ոչ մեծ մասնագիտական խումբ, որը պետք է իրագործի ՀՀ մամուլի և ռադիոհեռուստատեսային հաղորդումների վերլուծությունը տեղեկատվական անվտանգության տեսանկյունից,
- նման մոնիթորինգի հետևանքով ի հայտ բերված հրապարակումները և հաղորդումները, որոնք չեն բավարարում տեղեկատվական անվտանգության պահանջները, ենթարկվում են առավել մանրակրկիտ ուսումնասիրության, գուցեև այլ պետական կառույցների հետ համատեղ, հնարավոր ազդեցությունների աղբյուրները և գործող մեխանիզմներն ի հայտ բերելու նպատակով,
- վերոհիշյալ մեխանիզմների բացահայտումը հնարավորություն կընձեռի մշակել գործողությունների այն համախումբը, որը թույլ կտա, խուսափելով գրաքննական–վարչական բնույթի միջամտություններից և չխախտելով մամուլի ազատության օրենքը, փոխել տվյալ լրատվամիջոցի կողմնորոշումը:

Ի լրումն վերոհիշյալի, ՏԱ համակարգում պետք է գործեն անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կառավարման մարմիններին, ձեռնարկություններին և հանրությանը պետք է ապահովեն ճշգրիտ տեղեկատվությամբ և տեղեկատվական հոսքերի համապարփակ վերլուծությամբ: Եթե այդ նախապայմանը չի կատարվում, ապա վտանգվում է պետական մարմինների կողմից համարժեք որոշումների ընդունումը: Վերջինիս համատեքստում պետք է նշել, որ գերադասելի է, որպեսզի պետական մարմինները ստանան տեղեկատվություն ոչ միայն իրենց անմիջական ենթակայության տակ գտնվող հատուկ ծառայություններից, այլև պետական հովանու տակ գտնվող, սակայն անկախ կարգավիճակ ունեցող տեղեկատվական-վերլուծական կառույցների ցանցից (այս առիթով տեղին է հիշել, որ *բաց աղբյուրներից* ստացված լրահոսքի վերլուծությունը թույլ է տալիս ստանալ փակ տեղեկատվությունների ծավալի 80-90%-ը[1]): Վերլուծական կենտրոններից ձևավորված ենթակառուցվածքն ինքնին ՏԱ համակարգի կարևորագույն բաղադրամասն է: Միևնույն ժամանակ, նման ենթակառուցվածքը ենթադրում է, որ պետք է մշակվեն մեխանիզմներ, որոնք կապահովեն իշխանություն-հատուկ կառույցներ-վերլուծական կենտրոններ արդյունավետ համագործակցությունը:

Վերլուծական կամ ինչպես դրանք հաճախ անվանում են՝ «ուղեղային կենտրոնները» կարևորագույն դերակատարում պետք է ունենան տեղեկատվական հարձակողական և պաշտպանողական գործողություններում: Այդ խնդրում ինքնաբերաբար կարևորվում են նման կենտրոնների աշխատակիցները, ովքեր, լինելով տեղեկատվության, գիտելիքների և տեխնոլոգիաների, ազգային գաղափարների, հոգևոր և մշակութային արժեքների, ազգային ավանդույթների կրողներ, պետք է առանձին հոգածության արժանանան ՏԱ համակարգում:

[1] Александр Доронин, «Бизнес-разведка», «Ось-89», Москва, 2002.

Այս վերջին կետը կարիք ունի առանձնահատուկ դիտարկման, քանի որ այն, որպես կանոն, դուրս է մնում քննարկումներից**:** Հարկ է ևս մեկ անգամ շեշտել, որ տեղեկատվական անվտանգության հիմքում դրված են *հասարակության ունեցած ընդհանուր գիտելիքների տեսակարար կշիռը, նրա հոգևոր-ինտելեկտուալ հնարավորությունները,* ինչը պետության, ազգի մրցունակության ամենաարդիական չափանիշն ու հարատևման գրավականն է: Անհրաժեշտ է նշել, որ այս չափանիշով ՀՀ-ն սկսել է զգալիորեն զիջել ոչ միայն տնտեսապես զարգացած երկրներին, այլ նաև իր անմիջական հարևաններին: Եվ դա այն պարագայում, երբ ԽՍՀՄ-ում մեր հանրապետությունն անհամեմատ առաջավոր դիրքեր ուներ այդ ոլորտում, այսինքն՝ 1991թ. ՀՀ-ն գտնվում էր էապես առավել նպաստավոր մեկնարկային պայմաններում:

Հետևություններ

Անշուշտ, վերը բերված համառոտ դրույթները կարիք ունեն մանրակրկիտ մշակման և քննարկման: Միևնույն ժամանակ, ցանկացած տեղեկատվական անվտանգության համակարգ պետք է այս կամ այն չափով անդրադառնա վերոհիշյալ հարցերի համախմբին՝ կապելով դրանք որոշակի հանգամանքների և իրողությունների հետ: Որպես առաջին քայլ՝ ՏԱ ոլորտում անհրաժեշտ է մանրակրկիտ մշակել տեղեկատվական անվտանգության հայեցակարգը և դրանից բխող օրենսդրական փաթեթը: Նման աշխատանքը կարևոր է ոչ միայն համապատասխան օրենսդրության ստեղծմամբ, այլև նրանով, որ այդ փաստաթղթի ստեղծման գործընթացը և հետագա քննարկումները թույլ կտան ձևավորել մասնագիտական այն հանրությունը, որը հետագայում ի վիճակի կլինի գործնականում իրագործել ՏԱ հայեցակարգի դրույթները: